ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 25 2022 № 1

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ
HISTORY

ՀՏԴ՝ 930.85
DOI: 0.52971/18294316-2022.25.1-82

ՇԻՐԱԿԸ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ
(ըստ XVI-XVIII դարերի դրամների)

Վեռա Բոյան
Հայաստանի պատմության ազգային թանգարան

Բանալի բառեր՝ *մետաղադրամ, գանձ, դրամական հավաքածու, ռուսական կոպեկ, եվրոպական դրամներ, առևտուր, վաճառական, ճանապարհ:*

Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում քաղաքական, սոցիալական և տնտեսական ծանր պայմաններում գոյատևման և ինքնության պահպանման միջոցներ է որոնել և մշակույթի ազգային դրսևորումներով նպաստել դրանց պահպանմանն ու սերնդեսերունդ փոխանցմանը: Այդ միջոցներից կարելի է համարել առևտրական մշակույթի հմտությունների յուրացումը և համաշխարհային առևտրում էական դեր ունենալը:

Հայաստանն իր աշխարհագրական դիրքով զբաղեցրել է տարածաշրջանում կարևոր ռազմաքաղաքական տարածք: Այն հանդիսացել է Արևելքը Արևմուտքին կապող կարևոր հանգույց, որտեղով անցել են ռազմական, առևտրական՝ ժամանակաշրջանի համար կենսական նշանակություն ունեցող ուղիները:

Հայաստանի ճանապարհները հանգեցրել են պետության ներսում առևտրի զարգացմանը և նրա սահմաններից դուրս առևտրական մշակույթի ու ձևերի տարածմանը, ինչպես նաև առևտրական գործունեության նոր որակի ստեղծմանը: Դեռ վաղ ժամանակներից Հայաստանի հյուսիսային հատվածը ներգրավված է եղել առևտրային ակտիվ գործունեության մեջ:

Նախաբան. Գրավոր աղբյուրների և դրամագիտական նյութի վկայմամբ՝ Շիրակը տարանցիկ առևտրային ճանապարհներով կապվում էր հարևան երկրների և համաշխարհային առևտրի գլխավոր մայրուղիների հետ: Շիրակից և սոցիալ-տնտեսական,

մշակութային և առևտրական ճանապարհներով նրա հետ կապված հարակից տարածքներից գտնված դրամական գանձերը, առանձին դրամները և որոշ վերապահումներով նաև դրամական ժողովածուները, որոնք, հավանաբար, հավաքվել են նշված տարածքներից, կարևոր և հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում տարածաշրջանի առևտրական կապերի ու հարաբերությունների վերաբերյալ:

Այս ամենի համատեքստում ուսումնասիրության է արժանի Թալինի Իրինդ գյուղում 1949 թ. հայտնաբերված XVII դարի արծաթե դրամների գանձը՝ կազմված գերմանական, հոլանդական, ավստրիական, բելգիական, իսպանական դրամներից (ՀՊԹ 16287/1-30):



Թալինն այսօր Արագածոտնի մարզի մեջ է մտնում, սակայն նախկինում այն մաս է կազմել Ալեքսանդրապոլ գավառի:[1] 1921թ. Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի «ՀԽՍՀ վարչական վերաբաժանումների մասին» դեկրետով Ալեքսանդրապոլի գավառը բաժանվեց 7 գավառակների, որոնց մեջ էր մտնում նաև Թալինը՝ Ամասիայի, Ախուրյանի, Արագածի, Աշոցքի, Անիի և Արթիկի գավառակների հետ:[2] Բացի այդ՝ Թալինը գտնվում է Գյումրին Արարատյան դաշտին կապող մայրուղու վրա և իր դրամական գտածոների տիպային համամասնությամբ նույնն է, ինչ Շիրակի տարբեր վայրերից հայտնաբերված խմբերը:

[1] **Բոյաջյան Ա. -2009**, էջ 126:
[2] ՀԺՊ, 7, -1967թ., էջ 194:

Քիչ չեն նաև Գյումրիում կազմված դրամական ժողովածուները, որոնք, պետք է ենթադրել, հավաքվել են նշված տարածքից և շրջակա բնակավայրերից: Դրանցից է արծաթե ութ դրամից բաղկացած հավաքածուն, որը Հայաստանի պատմության թանգա-



բան է բերվել 1947թ., որից 4-ը XVI դարի ավստրիական դրամներ են (ՀՊԹ 15324-15328, 15611-15614):

Մեկ այլ ժողովածու՝ հավաքված Գյումրիում, որը թանգարանը ձեռք է բերել 1977 թ., ներառում է XVIII-XIX դդ. 251 պղնձե դրամ (ՀՊԹ 28827-29078): Հավաքածուի 87 ռուսական դրամներից 10-ը իշխանական շրջանի են՝ XVII-XVIII դդ.: Եվս մեկ պղնձե դրամների ժողովածու Գյումրիից նույնպես բաղկացած է տարբեր երկրների թողարկումներից (ՀՊԹ 19692/1-9)՝

- ռուսական (XVIII-XIX դդ.) - 5 դրամ
- ֆրանսիական (1801թ.) – 1 դրամ
- լեհական (1766 թ.) – 1 դրամ
- հունգարական (1765 թ.) – 1 դրամ
- գերմանական – 1 դրամ

Իր դրամական կազմով հետաքրքրություն է ներկայացնում Կարսում և Սասունում հավաքված 200 արծաթե (ՀՊԹ 19377/1-200) և 20 պղնձե (ՀՊԹ 19378/1-20) դրամների հավաքածուն, որը թանգարան մուտք է գործել 1985թ.: Այն ներառում է սելևկյան (1), Թաբարիստանի (2), բյուզանդական (1), օմայան (3), աբասյան (28), սասանյան (30), սելջուկյան (5), վրացական (5), մոնղոլական (4), հուլավույան (13), սեֆյան (37), հնդկական (4), թուրքական (2), եվրոպական (40), ռուսական (11) արծաթե և տասնինը պղնձե դրամներ (հռոմեական, Բոսպորի թագավորության, բյուզանդական, վրացական, իրանական):

Քննելով հավաքածուն՝ կարելի է ենթադրել, որ գանձում առկա XVII-XVIII դդ. ռուսական և եվրոպական դրամները ձեռք են բերվել Կարսում, այլ ոչ թե Սասունում: Այդ ժամանակաշրջանում վերջինս դուրս էր աշխույժ առևտրական ճանապարհային ուղիներից, որոնք անցնում էին առավել նշանակալի քաղաքներով: Նման դրամները, որոնք չէին կապվում տարածաշրջանի դրամական տնտեսության հետ, կարող էին

հայտնվել միայն առևտրականների միջոցով կամ բանակների ռազմական գործողությունների ժամանակ, որոնք կանգ էին առնում ռազմական և առևտրական մայրուղիների վրա գտնվող բնակավայրերում: Այդպիսի բերդաքաղաք էր Կարսը, որը կապվում էր առևտրական մայրուղու հետ:

Հավաքածուի եվրոպական դրամները լեհական, հունգարական, ավստրոհունգարական, իսպանական, նիդեռլանդական, գերմանական և ֆրանսիական են:

Կարսի հավաքածուի ռուսական դրամները			
Գահակալ	Անվ. արժեք	թվական	քանակ
Իշխանական շրջ.	կոպեկ	XVI-XVII դդ.	2 հատ
Աննա Իվանովնա (1730-1740 թթ.)	գրիվեննիկ պոլպոլտիննիկ	1733 թ. 17xx թ.	1 հատ 1 հատ
Ելիզավետա (1741-1761 թթ.)	գրիվեննիկ պոլպոլտիննիկ	1751 թ. 1752 թ.	1 հատ 2 հատ
Եկատերինա II (1762-1796 թթ.)	պոլպոլտիննիկ	1769 թ. 1771 թ. 1778 թ.	1 հատ 2 հատ 1 հատ

Հավաքածուի ռուսական և եվրոպական դրամները թվագրվում են XVI-XVIII դդ., երբ Հայաստանը դեռևս չէր գտնվում Ռուսաստանի քաղաքական և տնտեսական իշխանության ներքո: Հետևաբար կարելի է ենթադրել, որ այդ դրամները Հայաստան են հասել բացառապես առևտրական ճանապարհով: Չի բացառվում սակայն, որ դրանք Կարս հասած լինեն նաև ռուս-թուրքական պատերազմների արդյունքում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի պատմության թանգարանում (ՀՊԹ 12776-15852) պահվող ռուսական դրամների գանձը՝ բաղկացած 3077 արծաթե դրամներից, գտնված 1934 թվականին Արագածոտնի մարզի Կոշ գյուղում, որը, ըստ Պևտինգերյան քարտեզի, հնում գտնվել է Հայաստանով անցնող հինգ մայրուղիներից մեկի՝ Արտաշատ-Սեբաստոպոլիս ուղղությամբ ճանապարհի վրա: Այն անցել է Շիրակով դեպի Վրաստան և Աբխազիա[3]: Այդ ճանապարհը իր նշանակությունը պահպանել է նաև միջնադարում և շարունակել է գործել նաև ավելի ուշ շրջանում: Չի բացառվում, որ այդ ճանապարհն է հիմք հանդիսացել ժամանակակից գլխավոր մայրուղու՝ Երևան-Գյումրի ավտոճանապարհի համար:

Անեցի հարուստ վաճառական Տիգրան Հոնենցի կառուցած Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (1215թ.) արևելյան որմի ընդարձակ արձանագրության մեջ թվարկվում են Հոնենցի նվիրատվությունները[4], այդ թվում՝ այգիներ Երևանում, Օշականում, Կոշում, ինչպես նաև թվարկումների շարքում նշվում է Խուզած-Մախմուդ գյուղը Կարսում[5]: Սա վկայում է Արագածոտնի և Շիրակի տարածքային ընդհանրության մասին՝ ընդգրկված մեկ միասնական ռազմաառևտրական ճանապարհային հանգույցի մեջ:

[3] **Մանանդյան Հ.** -1936, էջեր 120, 133:
[4] ՂՀՎ -1966, էջ 62 (տախտակ XXI):
[5] **Манандян Я. -1954.** с.с. 279-281.

Կոշի գանձն ամբողջությամբ բաղկացած է «կոպեկ» դրամական միավորից, տվյալ ժամանակաշրջանի կոպեկին հատուկ պատկերագրությամբ. ձիավոր՝ նիզակը ձեռքին:

Գանձի դրամները ուսումնասիրվել են, կատարվել է չափագրական տվյալների գրանցում, դրամների դասակարգում, դրամահատարանների որոշում: Նախնական ուսումնասիրությամբ դրամները բաժանվել են ըստ գահակալների և դրամահատարանների՝ ներկայացված տոկոսային հարաբերակցությամբ:

Կոշի գանձը		
Գահակալ	**դրամների թիվ**	**%**
Իվան IV Ահեղ (1533-1584 թթ.)	5	0.16
Բորիս Ֆեոդորովիչ Գոդունով (1589-1605 թթ.)	4	0.12
Վասիլի Իվանովիչ Շույսկի (1606-1610թթ.)	6	0.19
Վլադիսլավ Սիգիզմունդովիչ (1610-1612 թթ.)	5	0.16
Միխայիլ Ֆեոդորովիչ Ռոմանով (1613-1645 թթ.)	1650	54.6
Ալեքսեյ Միխայլովիչ (1645-1676 թթ.)	281	9.3
Ֆյոդոր III Ալեքսեևիչ (1676-1682 թթ.)	24	0.78
Իվան V Ալեքսեևիչ համատեղ Պետրոս I Ալեքսևիչի հետ (1682-1696 թթ.)	7	0.23
Պետրոս I Ալեքսևիչ (1689-1725 թթ.)	8	0.26
Մորդովկա XV-XVIII դդ.	75	2.5
Անորոշ	1012	31.7

Գանձի ամենավաղ դրամը Իվան IV Ահեղի (1533-1584 թթ.) կոպեկն է, իսկ ամենաուշը՝ Պետրոս I Ալեքսեևիչի (1696-1717 թթ.) նախառեֆորմյան կոպեկը: Դրամական գանձը թաղվել է, ամենայն հավանականությամբ, XVIII դարի առաջին տասնամյակի ընթացքում:

Ամբողջական գանձի կշիռը կազմում է մոտ 1,3 կգ, դրամների կշիռը 0,28-0,69 գրամի միջակայքում է, իսկ տրամագծի միջինացված ցուցանիշը մոտ 13,5-14 մմ է: Գանձն առանձնահատուկ է իր թվաքանակի մեծությամբ:

Քննվող ժամանակահատվածում ռուսական դրամաթողարկումը կենտրոնացված էր չորս հիմնական դրամահատարաններում՝ Մոսկվա, Նովգորոդ, Պսկով և Տվեր[6]: Կոշի գանձի դրամների զգալի մասը պատկանում է Մոսկվայի դրամահատարանին՝ իր տարատեսակ դրամահատարանային նշաններով:

Տվյալ ժամանակաշրջանի ռուսական դրամներն այնքան սակավաթիվ են Հայաստանի տարածքում, որ դրանց, անկախ քանակից, հայտնաբերումը պատմական,

[6] **Спасский И. -1970**. с. 113.

դրամագիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում և կարևոր եզրահանգումների առիթ տալիս:

Հայերը, գաղութներ հիմնելով, մեծ դեր են խաղացել ռուսական և արևմտաեվրոպական առևտրի զարգացման գործում: Սակայն հայ-ռուսական փոխառնչությունները ոչ միայն տնտեսական բնույթ էին կրում, այլ նաև դրսևորվում էին հասարակական կյանքի մյուս ոլորտներում:

Միջնադարում ձևավորվեց հայերի՝ որպես առևտրական ժողովրդի մասին պատկերացումը Եվրոպայում: Հենց առևտրա-արհեստավորական հարուստ դասն էր դառնում այն կորիզը, որի շուրջ ձևավորվում էին առավել ազդեցիկ հայկական կենտրոնները Եվրոպայում, և նա էր իր միջոցներով հովանավորում մշակույթը հայկական գաղթօջախներում: Սակայն հայերն առանձնակի աչքի ընկան հատկապես Արևելյան Եվրոպայի, մասնավորապես Ռուսաստանի առևտրի զարգացման գործում:

Նույն ժամանակաշրջանով թվագրվող գանձեր են գտվել նաև Կովկասյան տարածաշրջանից[7]: ՀՊԹ-ում պահվող մի շարք գանձեր ու առանձին դրամներ բերվել են Էջմիածնի թանգարանից ու Լազարյան ճեմարանից, դրանց ծագումը, ցավոք, անհայտ է: Չի բացառվում, սակայն, դրանց՝ Հայաստանից գտնված լինելու հավանականությունը, հատկապես Էջմիածնի թանգարանից բերվածներինը:

Հայտնի են նաև Շիրակից և հարակից տարածքներից գտնված համաժամանակյա պարսկական և թուրքական դրամներ, սակայն դրանց մասին տվյալները նպատակահարմար չգտանք քննարկել այստեղ, քանի որ դրանք հանդիսացել են Հայաստանում շրջանառվող պաշտոնական վճարման միջոց: Հայաստանը, բաժանված օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև, հետևաբար ընդգրկված էր այդ կայսրությունների դրամական տնտեսության մեջ: Այնինչ ռուսական և արևմտաեվրոպական դրամները այստեղ են հասել վաճառականների միջոցով:

Եզրահանգում. Այսպիսով հայտնաբերված ռուսական և եվրոպական դրամների գանձը, առանձին դրամները և դրամական հավաքածուները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, և հետագա ուսումնասիրությունը նոր բացահայտումների հիմք կարող է հանդիսանալ: Նմանօրինակ բազմաքանակ գանձերի հայտնաբերումը մեկ անգամ ևս փաստում է տարածաշրջանի ներգրավվածությունը առևտրական ակտիվ գործունեության մեջ:

ШИРАК НА ТОРГОВЫХ ПУТЯХ (ПО МОНЕТАМ XVI-XVIII вв.)

Боян В.

Ключевые слова: *монета, клад, монетная коллекция, русская копейка, европейские монеты, торговля, купец, дорога.*

Представленные в статье монетные клады, отдельные монеты и, с некоторыми оговорками, монетные коллекции, которые, по всей вероятности, были составлены из монет,

[7] **Пахомов Е. -1940**. с. 66; **Пахомов Е. -1954**. с. 64; ՀՊԹ 17150:

обнаруженных в Шираке и ближайших районах, дают интересную информацию о торговых связях в XVI-XVIII веках.

На основании изученного материала можно констатировать, что транзитными торговыми путями Ширак был связан не только с соседними странами, но и с Россией и Европой.

SHIRAK ON TRADE ROUTES (ACCORDING TO COINS OF XVI-XVIII CENTURIES)

Boyan V.

Key words: *Coin, hoard, coin collections, Russian kopeck, European coins, merchant, road.*

The hoard presented in the article, individual coins and, with some restrictions, coin collections, which, most likely, were composed of coins found in Shirak and nearby areas, provide interesting information about trade relations in the 16th-18th centuries.

Based on the studied material, it can be stated that Shirak was connected not only with neighboring countries, but also with Russia and Europe through transit trade routes.

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Բոյաջյան Ա. -2009**, Ալեքսանդրապոլ-Լենինականի զավառի ժողովրդագրական դրությունը 1914-1930-ական թթ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատոր 12, Գյումրի:
2. ԴՀՎ -1966, Դիվան հայ վիմագրության պրակ I, Անի քաղաք, կազմ. Հ. Ա. Օրբելի, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան:
3. ՀԺՊ-1967, Հայ ժողովրդի պատմություն, հ. 7:
4. **Մանանդյան Հ. -1936**, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, հրատ. Մեքոնյան ֆոնդի, Երևան:
5. **Манандян Я. -1954.** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, V в. до н. эры – XV в. н. эры, изд. ЕУ. Ереван.
6. **Пахомов Е. -1940**. Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, вып. III, изд. АзФАН. Баку.
7. **Пахомов Е. -1954.** Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, вып. VI, изд. АН Аз. ССР. Баку.
8. **Спасский И. -1970.** Русская монетная система, Историко-нумизматический очерк, изд."Аврора", Л.

Ընդունվել է՝ 13. 03. 2022
Գրախոսվել է՝ 14. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Վերա ԲՈՅԱՆ՝ Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի ասպիրանտ,
էլ. հասցե՝ veraboyan777@gmail.com